

ջրումը ու արմատին չուրջ աչքացումը: Փորձառու անձեր տունկի զօրութիւնն ու հողի ուժը նկատի ունենալով կը յօտէին չպոլսնէրը, իրենց ձեռքի կոր ու սղոցանման դանակներով (պըչղը):

Անոնք գիտէին թէ քանի ճիւղ ու քանիական աչք պէտք էր ձգել նոր ջրջանին համար: Ժամանակէն ուշ յօտել (պոտամա) եկողներու որթատունկերը կռւլային, յումպէտս վատնելով աւիշը:

Նորանոր ճիւղեր ու ընձիւղներ կը պոռթկային, փոքրիկ ու փայլուն տերեւները շուտով կը խոշորնային, դալար ճիւղերը կ'երկարէին ու երկճղի բարակ ու զգայուն շօշափուկ մը (խաւիզիկ) նեցուկ կը փնտռէր փաթթուելու ու աւելի բարձրանալու համար:

Նոր կեանք ու կենդանութիւն կը տիրէր ամէն կողմ:

Հասելի էր դարնանային արեւին տակ հողի աշխատանքը: Քանդուած Սէֆինները կը նորոգուէին, պատերը կը պատուէին, զօրաւոր մայր ճիւղեր կը թեքուէին հողի տակ (կէտիրի պառկեցնել) ու անոր իւրաքանչիւր աչքէն նոր տունկեր արմատ կապել ու զօրանալէ վերջ կը կտրուէին մայր տունկէն:

Մայիսի մէջ հոն էր տանտիկինը իր ընտանիքին տարեկան եալի-րախը հաւաքելու համար:

Ընտրած տերեւները խնամով դասաւորած մատներուն մէջ, մաստաւեղին ծայրը դերձան, մանեկաձեւ շարոցներ կը շինէր չորցնելու համար:

Ճամբուն վրայ արդէն հաւաքեր էր խոզաֆի, սինձ, ծագու բաֆնար ու քօռամֆ առատօրէն:

Առանց խնամքի ու գիտական սրսկումներու ձգուած այգիները շուտով կ'ուռճանային զերծ միջատներու յարձակումէն: Խստաշունչ ձմեռը գրեթէ ոչնչացուցած կ'ըլլար այդ կարգի մակարոյծներու հակիթները:

Փորձառու անձերու կը յանձնուէր այգեսնկումը:

Հողը կը մաքրուէր, խորունկ կը փորուէր քարէ ու արմատներէ մաքրելու համար, Քիրիզմէ կը կտրուէր, Ըմպօլներու կը բաժնուէր, հանուած քարերով սէֆիններ կը քաշուէր ջուրը թակարդելու նպատակով: Նոր տնկուած այգին կը կոչուէր Ֆըտըմ:

Շատ կանուխէն կտրուած ու ջուրը դրուած կ'ըլլային փափաքուած տեսակէ խաղողի ճիւղեր: Խոնաւութեան մէջ բնական ձեւով արմատ կը կապէին այդ կըլմատաները ու կը տնկուէին: Երկու տարիէն նոր այգին կը սկսէր պտուղ տալ, բայց չորրորդ տարին հազիւ թէ կանոնաւոր այգի եղած կ'ըլլար:

Այսպէս, պատուաստումով, մշակութեամբ ու տեսակի ազնուա-